

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածում հեղինակը ներկայացրել է իրավական կանխավարկածի հասկացությունը և դրա նշանակությունն ապացուցման ոլորտում, ինչպես նաև մեկնաբանվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (նախագծի) 106-րդ հոդվածում նախատեսված իրավական կանխավարկածները:

Հիմնարար բառեր - կանխավարկած, պարտականություններից բխող հանրահայտ փաստերի ապացուցման բեռ:

Իրավունքի տեսության և քրեական դատավարության գիտության մեջ մշտապես քննարկվել են դատավարական իրավունքում իրավական կանխավարկածների դերը և նշանակությունը, դրանց ազդեցությունն ապացուցման առարկայի և ապացուցման պարտականության բաշխման վրա: Իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակներ բացասական դիրքորոշում են ունեցել իրավական կանխավարկածների վերաբերյալ, այնուամենայնիվ իրավացի են այն մասնագետները, ովքեր գտնում են, որ քրեաիրավական և քրեադատավարական ոլորտում իրավական և փաստացի բազմաթիվ կանխավարկածների ճանաչումը օրենսդրության զարգացման ռազմավարական ուղղություններից է: Իրավունքի բոլոր ճյուղերում նկատվում է իրավական կանխավարկածների թվաքանակի ավելացման միտում: Ասվածը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության զարգացման միտումներին:

ՀՀ քրեական դատավարությունում օրենսդրությամբ ուղղակի ամրագրված է եղել միայն անմեղության կանխավարկածի օրենսդրական բնորոշումը, իսկ մի շարք այլ կանխավարկածներ, թեև գիտության մեջ քննարկվել և վերլուծվել են, սակայն օրենսդրական ամրագրում չեն ստացել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի Նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 106-րդ հոդվածում առաջին անգամ համակարգված կերպով ամրագրվեց իրավական կանխավարկածների վերաբերյալ դրույթը: Նախագծի քննարկվող հոդվածն առավելապես փոխառնվել է Լատվիայի քր. դատ. օր-ից, որի 125-րդ հոդվածն ամրագրում է փաստի իրավական կանխավարկածը: Նշված հոդվածի համաձայն՝ եթե քրեական գործի ընթացքում հակառակն ապացուցված չէ, ապա առանց լրացուցիչ ընթացակարգային գործողությունների իրականացման ապացուցված են համարվում հետևյալ հանգամանքները.

1. հանրաճանաչ փաստերը,
2. այլ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը,

3. օրենքով սահմանված կարգով հաստատված վարչական իրավախախտման փաստը, եթե անձը տեղյակ էր դրան,

4. այն փաստերը, որոնք անձին հայտնի են կամ պետք է հայտնի լինեն նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իր պարտականությունների կապակցությամբ,

5. այն փաստերը, որոնք անձին հայտնի են կամ պետք է հայտնի լինեն իր մասնագիտական և պաշտոնական պարտականությունների կապակցությամբ,

6. ժամանակակից գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի մեջ ընդունված հետազոտման մեթոդների ճշտությունը:

Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի (նախադատելի փաստեր) համաձայն՝ առանց հետազոտման որպես ապացույց ընդունվում են հանրաճանաչ փաստերը, դատվածության մասին դատավճիռը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստական հանգամանքները, ցանկացած հանգամանք կամ փաստ, որոնց շուրջ կողմերը ձեռք են բերել համաձայնություն:

Մույն հոդվածում կներկայացվի իրավական կանխավարկածի հասկացությունը և ապացուցման ոլորտում դրանց նշանակությունը, այնուհետև կմեկնաբանվեն Նախագծի 106-րդ հոդվածում ամրագրված իրավական կանխավարկածները:

Իրավական կանխավարկածը իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ բնույթի ենթադրություն (մտահանգում) է, որն ունի հավանականության բարձր աստիճան և ենթակա չէ ապացուցման: Քրեական դատավարությունում իրավական կանխավարկածներն ունեն կարևոր նշանակություն. մասնավորապես դրանք նպաստում են քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Այսպես, իրավական կանխավարկածը տեղեկատվության պակասի պայմաններում իրականացվող իրավակիրառմանը հաղորդում է որոշակիություն, լրացնում է փաստի վերաբերյալ տեղեկատվության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բացը, ապահովում է վարույթը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի իրականացումը: Բանն այն է, որ այս կամ այն փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ ենթադրությունը ինքնին լրացնում է այդ փաստի մասին տեղեկատվության պակասը, ինչպես նաև վարույթն իրականացնողին ազատում է իրավաբանական փաստի հաստատման կամ հերքման ուղղությամբ լրացուցիչ ապացուցողական գործողություններ կատարելու պարտականությունից:

Ապացուցման ոլորտում իրավական կանխավարկածի գործառնությունների վերաբերյալ առկա են հակասական մոտեցումներ: Հեղինակների մի խումբը իրավական կանխավարկածը դիտում է որպես ապացուցման պարտականությունը բաշխելու միջոց⁵, իսկ հեղինակների երկրորդ խումբը՝ որպես պարտականությունից ազատելու միջոց⁶: Նախագծում իրավական կանխավարկածը ձևակերպված է որպես ապացուցման պարտականությունից ազատելու եղանակ, սակայն, կարծում ենք, իրավական կանխավարկածի միջոցով ապացուցման պարտականությունից ազատելու արդյունքում տեղի է ունենում նաև ապացուցման պարտականության բաշխում:

Քրեական դատավարությունում կանխավարկածի միջոցով ապացուցման բեռի բաշխման կանոններն ապահովում են տարբեր շահեր: Այդ շահերի մեջ առաջնային տեղ է զբաղեցնում կողմերի մրցակցային հավասարությունը: Այն կողմը, որը օբյեկտիվորեն մյուս կողմի համեմատ գտնվում է առավել թույլ, ուստի նաև անհավասար վիճակում, կարող է պաշտպանվել կանխավարկածով: Վերջինս թույլ կողմին ազատում է իր համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման անհրաժեշտությունից: Տեսության մեջ նշվում է, որ ապացուցման բեռը կողմի վրա դրվում է հետևյալ պայմաններում՝

1. իր նյութական և կազմակերպական հնարավորություններով այդ կողմը փաստացի ավելի ուժեղ է, քան նրա հակառակ կողմը,

2. ապացուցման ենթակա հանգամանքը օբյեկտիվորեն հասանելի է տվյալ կողմի համար:

Այսպես, անմեղության կանխավարկածը պաշտպանում է մեղադրյալին՝ մեղավորության ապացուցման պարտականությունը դնելով մեղադրողի վրա, քանի որ պաշտպանության կողմը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան հանրային քրեական հետապնդման կողմը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական միջոցները: Սակայն իրավիճակն արմատապես փոխվում է հատուկ դեպքերում, երբ պաշտպանության կողմը օբյեկտիվորեն գտնվում է անհամեմատ առավել բարենպաստ վիճակում, քան մեղադրանքի կողմը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ

մեղադրողը ստիպված է հերքելու այսպես կոչված բացասական փաստերը (ինչ - որ մի փաստի բացակայությունը), որոնց վրա հենվում է պաշտպանության կողմը, հատկապես եթե բացասական փաստերը միաժամանակ համարվում են գործով գլխավոր փաստերը⁷:

Արդյոք իրավական կանխավարկածներն ընդգրկվում են ապացուցման առարկայի մեջ: Քաղաքացիական դատավարությունում տարածված է եղել այն մոտեցումը, որ իրավական կանխավարկածները մտնում են ապացուցման առարկայի մեջ: Օրենսդիրը կանխավարկածի միջոցով մատնանշում է այն փաստերը, որոնք պետք է ապացուցի հայցվորը կամ պատասխանողը: Ապացուցման առարկայի մեջ մտնում են և՛ հայցվորի, և՛ պատասխանողի կողմից ենթակա փաստերը: Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ իրավական կանխավարկածները, ինչպես հանրաճանաչ⁸ և նախադատելի փաստերը, չեն մտնում ապացուցման առարկայի մեջ, այլ հանդիսանում են կողմերին ապացուցման պարտականությունից ազատելու հիմք⁹: Ապացուցման առարկայի և իրավական կանխավարկածների հարաբերակցության վերաբերյալ առավել ընդունելի մոտեցում է արտահայտել Յու. Սերիկովը, ով գտնում է, որ ցանկացած կանխավարկած բաղկացած է երկու փաստերից՝ հիմքփաստից և ենթադրվող փաստից: Որպեսզի ենթադրվող փաստը հնարավոր լինի օգտագործել, նախ և առաջ պետք է ապացուցել հիմքփաստի առկայությունը, օրինակ՝ հայրության կանխավարկածի գործողության համար նախ պետք է ապացուցել ամուսնության առկայությունը: Ուստի հիմքփաստերը մտնում են ապացուցման առարկայի մեջ, իսկ ենթադրվող փաստերը չեն կազմում ապացուցման առարկայի մաս¹⁰: Ասվածը վերաբերում է նաև քրեական դատավարության առանձին կանխավարկածներին, օրինակ՝ անմեղության կանխավարկածի պարագայում ապացուցման առարկայի մեջ է մտնում հիմքփաստը՝ անձին հանցագործության մեջ մեղադրելը: Եթե անձն ապացուցում է, որ իրեն մեղադրել են հանցագործության մեջ (հիմքփաստ), ապա այդ պահից սկսում է գործել անձի անմեղության ենթադրվող փաստը, որը չի մտնում ապացուցման առարկայի մեջ: Հանցագործության մեջ մեղադրվելու մասին հիմք - փաստի ապացուցումը վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ բացակայում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը, սակայն անձը փաստացի գտնվում է քրեական հետապնդման վիճակում կամ անձին մեղադրել են հանցագործության մեջ քրեադատավարական հարաբերություններից դուրս:

Իրավական կանխավարկածներն ինքնին ենթակա չեն ապացուցման, սակայն նրանց որոշ մասը կազմում է ապացուցման առարկայի մեջ մտնող

հանգամանք, կամ իրավական կանխավարկածով կարելի է հիմնավորել ապացուցման առարկայի մեջ մտնող այլ հանգամանքներ: Օրինակ՝ հանրաճանաչ փաստով կարելի է հիմնավորել ապացուցման ենթակա մի շարք հանգամանքներ: Այսպես, ՀՀ քր. օր-ի 63-րդ հոդվածում, որպես քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, նշվում է հանցանքը ռազմական կամ արտակարգ դրության, տարերային կամ հասարակական այլ աղետի պայմաններում, ինչպես նաև զանգվածային անկարգությունների ժամանակ կատարելը: Եթե առերևույթ հանցավոր արարքը կատարվել է հանրաճանաչ համարվող տարերային աղետի պայմաններում, ապա աղետի առկայության փաստը ինքնին ենթակա չէ ապացուցման, սակայն այդ հանրաճանաչ փաստով կարելի է հիմնավորել պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքը:

Նախագծում սահմանվում են ստորև նշված իրավական կանխավարկածները, որոնք ենթակա չեն ապացուցման:

Ապացուցման ենթակա չեն հանրաճանաչ փաստերը: Մարդկային գործունեություն իրականացնող ցանկացած անձ պետք է տիրապետի իր միջավայրի մասին որոշակի գիտելիքների, պատկերացում ունենա ընդհանուր օրինաչափությունների մասին: Այսպիսի գիտելիքների մի մասը հայտնի են դառնում շատերին, մյուս մասը՝ որոշակի խումբ անձանց: Շատերի համար հայտնի փաստերի իմացությունը հնարավորություն է տալիս կողմնորոշվել միջավայրում, իրականացնել որոշակի աշխատանք:

Քրեական վարույթում ներգրավված անձինք նույնպես իրենց գործունեությունն իրականացնելիս օգտագործում են հանրաճանաչ փաստեր: Հանրաճանաչ փաստերը հատկապես օգտագործվում են ապացույց հավաքելիս, ստուգելիս և գնահատելիս: Որոշ հեղինակներ մերժում են քրեական դատավարությունում հանրաճանաչ փաստերի կիրառության հնարավորությունը: Այսպես, Վ. Շուդնիկովը գտնում է, որ քրեական վարույթի անմիջականության սկզբունքից ելնելով՝ ցանկացած հանգամանք պետք է հաստատվի ապացույցով, այսինքն՝ փաստական տվյալներով, որոնք չեն կարող փոխարինվել դրանց հանրաճանաչությամբ¹²: Այս մոտեցումը հերքվում է դատավարագետների մեծ մասի կողմից¹³: Դեռևս հռոմեական իրավունքում արքայի անհատական նշանակություն ուներ այն կանոնը, ըստ որի՝ «հանրաճանաչ հանգամանքը ենթակա չէ ապացուցման»:

Հանրաճանաչ են այն փաստերը, որոնք որևէ մեկի մոտ ողջամիտ կասկած չեն հարուցում: Դրանք առաջին հերթին բնության երևույթներն են և համաշխարհային պատմության դեպքերը: Հանրաճանաչ փաստեր են համարվում ջրհեղեղները, երաշտները, երկրաշարժերը, այլ տարերային

աղետները, սոցիալական որոշակի իրադարձությունները՝ հեղափոխություններ, գործադուլներ և այլն: Հանրաճանաչ փաստեր են համարվում նաև որոշակի առարկաների ֆիզիկական, քիմիական տեխնոլոգիական հատկանիշները, օրինակ՝ օդին համարվում է ալկոհոլ:

Հանրաճանաչ փաստերից պետք է տարբերել այսպես կոչված հանրահայտ փաստերը (fact of common notoriety), որոնք հեշտությամբ կարող են հաստատվել գրավոր աղբյուրներով, տեղեկանքներով, օրացույցով, աշխարհագրական քարտեզներով, որոնց հավաստիությունը, որպես կանոն, կասկած չի հարուցում, օրինակ՝ իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքով կարող է հաստատվել, թե դեպքի օրը ինչպիսին են եղել եղանակը և օդի ջերմաստիճանը: Թեև այս փաստերը հիմնականում անվիճելի են, և հաստատելը դժվարություն չի ներկայացնում, սակայն դրանք չեն համարվում հանրաճանաչ, քանի որ դրանց հաստատման համար, բոլոր դեպքերում, պահանջվում են որոշակի ապացույցներ (օրինակ՝ արտավարության փաստաթղթեր), մինչդեռ հանրաճանաչ փաստերն ապացուցված են համարվում իրավական կանխավարկածի ուժով:

Փաստերը վարույթ իրականացնող մարմնի կողմից կարող են դիտվել հանրաճանաչ օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների առկայության դեպքում¹⁴: Օբյեկտիվ պայմանն առկա է այն դեպքում, երբ տվյալ փաստը հայտնի է լայն շրջանակի անձանց, իսկ սուբյեկտիվ պայմանը՝ երբ տվյալ փաստը հայտնի է վարույթն իրականացնող մարմնին: Հանրաճանաչ փաստերի օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները որոշելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք հարաբերական են ժամանակի և տարածության մեջ:

1. *Հանրաճանաչ փաստերի հարաբերական լինելը ժամանակի մեջ:* Այն, ինչ որոշակի խումբ անձանց համար հանրաճանաչ է, մյուսների համար կարող է լինել անձանոթ: Փաստերի հանրաճանաչ լինելը կախված է այն բանից, թե ինչքան ժամանակ է անցել տվյալ դեպքից: Բանն այն է, որ ժամանակի ընթացքում բնակչությունը կարող է մոռանալ այս կամ այն իրադարձությունը. այն, ինչ հանրաճանաչ էր 20 տարի առաջ, քրեական վարույթն իրականացնելու պահին կարող է այլևս չհամարվել հանրաճանաչ (ասվածը չի վերաբերում համաշխարհային պատմության դեպքերին):

2. *Հանրաճանաչ փաստերի հարաբերական լինելը տարածության մեջ:* Փաստերի հանրաճանաչ լինելու վրա կարող է ազդել նաև տվյալ փաստերի տեղային բնույթը: Օրինակ՝ տեղային նշանակության փաստերը կարող են հանրաճանաչ լինել տվյալ մարզի բնակչության, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող տարածքային մարմինների համար, սակայն անհայտ լինել մայրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քաղաքում գտնվող հանրապետական մարմինների համար (ՀՀ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատավորների, ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի աշխատակիցների, ՀՀ գլխավոր դատախազության դատախազների): Կախված փաստերի տարածվածության աստիճանից կամ տեղային նշանակությունից՝ հանրաճանաչ փաստերը լինում են՝ 1. ողջ մարդկությանը հայտնի հանրաճանաչ փաստեր (օրինակ՝ ԱՄՆ-ում սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը), 2. որոշակի պետության տարածքում հայտնի հանրաճանաչ փաստեր (օրինակ՝ 1988թ.-ին ՀՀ-ում տեղի ունեցած երկրաշարժը), 3. որոշակի մարզում հայտնի հանրաճանաչ փաստեր (օրինակ՝ կոնկրետ մարզում տեղի ունեցած ցրտահարությունը):

Վարույթ իրականացնող մարմինը, ինչ-ինչ չափանիշներից ելնելով, պետք է որոշի տվյալ փաստի հանրաճանաչ լինելու օբյեկտիվ պայմանները: Գործնականում հնարավոր չէ սահմանել հստակ որևէ չափանիշ, որը կարող է կիրառելի լինել բոլոր դեպքերի համար, սակայն առավել տարածված չափանիշը կարող է համարվել, օրինակ, տվյալ փաստի մասին զանգվածային լրատվության միջոցներում տեղեկությունների տարածումը:

2. *Այսպացուցման ենթակա չէ արդի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառների համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաների ճշմարտացիությունը:* Կախված հանրաճանաչ գիտելիքի բովանդակությունից՝ հանրաճանաչ փաստերը լինում են պատմական-կենցաղային, որոնց մասին նշվեց, և մասնագիտական-իրավաբանական¹⁵: Թեև ՀՀ քր. դատ. օր-ը արդի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառների համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաների ճշմարտացիությունն առանձնացրել է հանրաճանաչ փաստերից, սակայն դրանք ըստ էության համարվում են մասնագիտական ոլորտի հանրաճանաչ փաստեր, որոնք որոշակի մասնագիտության բնագավառում ունեն համընդհանուր ճանաչում, օրինակ՝ բժշկության ոլորտում՝ արյան որոշակի խմբերի առկայությունը:

Արդի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառների համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաներից են դիալեկտիկայի մեթոդաբանությունը, որը լայնորեն կիրառվում է դատական փորձաքննությունների ոլորտում, օրինակ՝ հիմնարար նշանակություն ունի մատերայի արտացոլման ունակությունը, որի հիման վրա փորձաքննությունների ընթացքում օգտագործվում են արտացոլման բազմաթիվ ձևեր, օրինակ՝ երկու փոխներգործող օբյեկտների արտացոլումը: Համընդհանուր ճանաչում կարող են ունենալ նաև համեմատական մեթոդը, մաթեմատիկական մեթոդները (չափումներ, մաթեմատիկա-

կան մոդելավորում և այլն):

3. *Այսպացուցման ենթակա չէ փաստը, որն անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ նորմատիվ ակտերով՝ սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունների կապակցությամբ:* Մեկնաբանվող հոդվածում օգտագործվում է «մասնագիտական կամ պաշտոնական պարտականություններ» հասկացությունները, ուստի տվյալ դեպքում խոսք է գնում պաշտոնական (մասնագիտական) պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածի մասին, որը չի վերաբերում մարդու ընդհանուր կարգավիճակից բխող պարտականություններին առնչվող փաստերի իմացությանը:

Պաշտոնական (մասնագիտական) պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածը վերաբերում է ինչպես մեղադրյալի, այնպես էլ տուժողի և այլ մասնակիցների կողմից հանցավոր դեպքի կապակցությամբ իրենց պաշտոնական պարտականություններին առնչվող փաստերին: Մինչև հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի հայտնի իրավաբան Լ. Վլադիմիրովը նշում էր, որ այսպացուցման բեռը կարող է դրվել մեղադրյալի վրա այն դեպքերում, երբ որոշակի գործողություն կատարելու կամ ինչ-որ իրի տիրապետման համար պահանջվում է օրինական թույլտվություն, լիազորություն¹⁷:

Պաշտոնական (մասնագիտական) պարտականություններին առնչվող փաստերի իմացության կանխավարկածի համաձայն՝ պաշտոնատար անձինք կամ մասնագիտական գործունեություն իրականացնող այլ սուբյեկտները տիրապետում են (կամ պետք է տիրապետեն) իրենց պաշտոնական իրավասությունների շրջանակներում գտնվող փաստերին, քանի դեռ չի այսպացուցվել հակառակը: Այս կանխավարկածը հիմնված է այն օրինաչափության վրա, որ մասնագիտական կամ պաշտոնական գործունեություն իրականացնող անձինք առավելապես տիրապետում են (պետք է տիրապետեն) իրենց իրավասության ներքո գտնվող փաստերին: Օրինակ՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քննչական և դատախազական մարմինները սահմանում են քննչական և դատախազական մարմիններում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման ուղղությամբ պաշտոնատար անձանց արտոնությունները: Պաշտոնական (մասնագիտական) պարտականություններին առնչվող փաստերի իմացության կանխավարկածի համաձայն՝ քննչական և դատախազական մարմինների համապատասխան պաշտոնատար անձը տիրապետում է պետական գաղտնիքի պաշտպանության ապահովման ուղղությամբ արտոնություններ վերապահված անձանց ցանկին, ինչպես նաև այդ արտոնու-

թյուններին:

Մեկնաբանվող նորմի «պետք է հայտնի լիներ» ձևակերպումից բխում է, որ եթե պաշտոնատար անձն ապացուցում է, որ փաստացի չի տիրապետում պարտականություններին և դրանց առնչվող փաստերին, ապա դրանով ինքնին չի հերքվում նշված կանխավարկածը, քանի որ պաշտոնատար անձին պետք է հայտնի լիներ իր պարտականություններին առնչվող փաստերը: Պաշտոնական պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածը կարելի է հերքել այն դեպքերում, երբ պաշտոնատար անձն ապացուցում է՝ 1. փաստի իմացությանն առնչվող պարտականությունը իրավական ակտով վերապահված է մեկ այլ պաշտոնատար անձի, ուստի չի տիրապետում և չէր կարող տիրապետել տվյալ պարտականությանն առնչվող փաստին: 2. փաստը վերաբերում է փոփոխված իրավական ակտով իրեն վերապահված պարտականություններին, սակայն իրավական ակտի փոփոխություններն օբյեկտիվորեն իրեն հասանելի չէին. օրինակ՝ զինվորական հրամանատարը տևական ժամանակով գտնվում է բարձր դիրքերում, որտեղ իր պարտականությունների փոփոխության վերաբերյալ նորմատիվ-իրավական ակտը հասանելի չէր:

Պաշտոնական պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածը փոխկապակցված է օրենքի իմացության կանխավարկածի հետ: Եթե պաշտոնատար անձը տեղյակ է իր պարտականություններին, ապա տեղյակ է կամ պետք է տեղյակ լինի նաև այդ պարտականություններին առնչվող փաստերին: Օրենքի իմացության կանխավարկածը հերքելով՝ հնարավոր է հերքել նաև պաշտոնական պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածը: Եթե պաշտոնատար անձի համար հասանելի չեն եղել իր լիազորությունների փոփոխության վերաբերյալ իրավական ակտերը, ապա դրանով հերքվում է նաև օրենքի իմացության կանխավարկածը, որի հետևանքով հերքվում է նաև պաշտոնական պարտականություններին վերաբերող փաստերի իմացության կանխավարկածը:

4. *Ապացուցման ենթակա չէ փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք:* Ժամանակակից դատավարական իրավունքի զարգացման ներկայիս պայմաններում ապացուցման պարտականության բաշխման խնդիրը ընկալվում է փոքր-ինչ այլ կերպ. հաճախ քննարկվում է օրենքով նախատեսված դեպքերում առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու թույլատրելիության հարցը: Այսպես, անգլիական ստատուսներով և դատական նախադեպերով սահմանվում են մի շարք դեպքեր, երբ մեղադրյալի վրա է դրվում առանձին փաստերի

ապացուցման պարտականությունը: Այսպես, դրամանենգության մասին 1936թ. օրենքի համաձայն՝ անգլիական քրեական դատավարությունում դրամի կեղծման և դրամահատման համար նախատեսված սարքավորումների տիրապետման օրինակականության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Անմեղսունակության ապացուցման պարտականությունը կրում է պաշտպանության կողմը: Այս դրույթը առաջին անգամ ձևակերպվել է Նոուտենի գործով (1843թ.) և հաստատվել Ուոլմինգտոնի գործով (1935թ.): Ուոլմինգտոնի գործով լորդ կանցլերը Լորդերի պալատ է ներկայացրել մի ամբողջ հետազոտություն, որտեղ եզրակացնում է. «Անգլիական իրավունքում կարմիր թելով անցնում է այն կանոնը, որ մեղադրյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրողի վրա, եթե խոսքը չի վերաբերում հոգեկան հիվանդությանը կամ էլ օրենքով նախատեսված այլ բացառություններին»:

Ֆրանսիայի Մաքսային օրենսգրքի 392.1 հոդվածի համաձայն՝ անձը, ով տիրապետում է մաքսանենգ ապրանքների, պատասխանատու է իրավախախտման համար:

Ներկայումս էկոլոգիական իրավախախտումների կանխմանն ուղղված քաղաքականության գործիքներից է իրավախախտման օբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը հաստատող առանձին փաստերի ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը: Օրինակ, ապացուցման պարտականության բաշխման փոփոխությունը կիրառվում է կոնկրետ պետության բացառիկ տնտեսական գոտում այլ պետության նավով ապօրինի ձկնորսության գործերի քննության ընթացքում: Տեսության մեջ նշվում է, որ այս դեպքում ավանդական անմեղության կանխավարկածի կիրառությունը սահմանափակվում է, քանի որ մեղադրյալը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնց ներկայացումը առավել դյուրին է պաշտպանության կողմի, քան մեղադրողի համար: Օրինակ՝ Մեյշելյան թերակղզիների՝ օտարերկրյա ձկնորսական նավերի վերահսկման մասին 1979թ.-ի դեկրետի 15 (1) պարագրաֆում սահմանված է, որ բացառիկ տնտեսական գոտում գտնվող նավում հայտնաբերված ողջ ձուկը համարվում է այդ տնտեսական գոտում որսված ձուկ: Թեև նավում ձկան առկայությունը ինքնին իրավախախտում չէ, սակայն այս փաստի կանխավարկածի հերքման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա:

Ավելին, առանձին պետությունների սահմանադրություններում անմեղության կանխավարկածը ամրագրվում է ոչ նրա ավանդական ընկալմամբ: Այսպես, Պապուա Նոր Գվինեայի Սահմանադրության 37 (4) հոդվածի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող անձը պետք է համար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վի անմեղ, եթե իրավունքի համաձայն՝ այլ բան սահմանված չէ: Իրավունքով մեղադրյալի վրա կարող է դրվել այն կոնկրետ փաստերի ապացուցման պարտականությունը, որոնք գտնվում են կամ ողջամիտ զգուշության դեպքում պետք է գտնվեն բացառապես իր իրազեկության սահմաններում:

Առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու վերաբերյալ դրույթներ պարունակում են նաև մի շարք միջազգային Կոնվենցիաներ: ՄԱԿ-ի Անդրազգային հանցավորության դեմ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջը պարզելու հնարավորությունը, որ անձը, որը հանցագործություն է կատարել, ապացուցի հանցագործությունից ստացված ենթադրյալ եկամտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ քննության բնույթին: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ 2003թ. Կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից-պետություն իր սահմանադրության և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով քննության է առնում այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, ինչպիսիք որ պահանջվեն, միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը այն հաշվով, որ իբրև քրեորեն պատժելի արարք ճանաչվի դիտավորյալ կատարվելու դեպքում անօրինական հարստացումը, այսինքն՝ հանրային պաշտոնատար անձի ակտիվների՝ նրա օրինական եկամտները գերազանցող նշանակալի մեծացումը, որը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել:

Անհրաժեշտ է քննարկել այն հարցադրումը, թե արդյոք առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի հակասում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Այսպես՝ Ֆամ Խուսանգն ընդդեմ Ֆրանսիայի գործով մեղադրյալը ձերբակալվել էր սահմանազանից հերոին ներկրելիս: Ֆրանսիական օրենսդրությունը նախատեսում է, որ արգելված ապրանքների ներկրումը, այդ թվում՝ հերոինի, ենթադրվում է ապօրինի, եթե այդ ապրանքը ներկրող անձը հակառակ չի ապացուցել, օրինակ՝ այն դեպքում, երբ ներկայացվում են բավարար արդարացնող փաստաթղթեր, կամ երբ ապացուցվում է, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում կամ հանդիսանում է այնպիսի սխալի հետևանք, որից հնարավոր չէր խուսափել: Ներկայացվող գործում պաշտպանության կողմը ոչ մի նման արդարացնող ապացույց չէր ներկայացրել, իսկ մեղադրյալը հրաժարվել էր որևէ բացատրու-

թյուն տալուց: Եվրոպական դատարանը, քննելով գործը, գտավ, որ Եվրոպական Կոնվենցիայի խախտումը բացակայում է, եթե մարդը, ում մոտ հայտնաբերվում է արգելված գույք, պարտավորեցվում է բավարար ձևով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա՝ անձը, կհամարվի մեղավոր:

Գրական փաստերը, որոնք ենթադրաբար կարող էին հերքել մեղադրյալի մոտ թմրամիջոցների պատահական կամ օրինական գտնվելու փաստը, գործնականում ֆրանսիական իշխանության համար անհասանելի էին: Մեղադրյալի բացատրությունների բացակայության պայմաններում դրանք պետք է փնտրվեին արտասահմանյան երկրների տարածքներում և անորոշ ժամանակահատվածի կտրվածքով: Գրան հակառակ՝ դրական փաստերի բացահայտումը թույլ է տալիս մեղադրող կողմին ապահովել²⁰ ապացուցման հիմնական պարտականությունը :

Եվրոպական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սկզբունքորեն չի բացառում ազգային օրենսդրությունում իրավական կամ փաստական կանխավարկածների գոյությունը, որոնց ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Այնինչ, ցանկացած դրույթ, որը սահմանում է անմեղության ապացուցման պարտականության փոխանցում կամ հնարավոր է համարում մեղադրյալի դեմ գործող կանխավարկածի կիրառումը, պետք է սահմանափակված լինի բանական սահմաններով՝ հաշվի առնելով այն ամենի կարևորությունը, ինչը մեղադրյալի համար դրված է խաղասեղանին և ինչը ապահովում է նրա պաշտպանությունը»: (Salabiaku v. France, 7 հոկտեմբերի 1988, p 28):

Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի գործով դիմումատուի նկատմամբ, ով իրականացրել էր թմրամիջոցներով բեռնված ճամպրուկի փոխադրում, առաջ էր քաշվել մեղավորության կանխավարկածը: Եվրոպական դատարանը եկավ այն եզրակացության, որ ազգային դատարանը ազատ է եղել իրավիճակը գնահատելու հարցում և հաշվի է առել գործի հանգամանքները՝ բեկանելով նախկինում կայացված դատավճիռներից մեկը, ուստի բացակայում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը:

Ուշագրավ է, որ փաստական կանխավարկածներին, որոնք տեղ են գտել առանձին պետությունների օրենսդրություններում, Եվրոպական դատարանը շատ զգույշ է մոտենում և յուրաքանչյուր գործով կարևորում է, թե արդյոք մեղադրյալին հնարավորություն տրվել է արդյունավետ պաշտպանվելու, այսինքն՝ հերքելու մեղքը հաստատող կանխավարկած-փաստերը (որոնք համարվում են գոյություն ունեցող, քանի դեռ հակառակ չի ապացուցվել): Այս պարագայում անմեղության ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրյալի վրա: Գատարանը այս դեպքերում հատուկ

ուշադրություն է դարձնում որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուն:

Ապացուցման պարտականության հետ սերտորեն կապված է նաև այսպես կոչված «լռության իրավունքը», երբ անձի կողմից իր անմեղության վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը չի դիտարկվում իբրև նրա մեղավորության ապացույց: Ընդհանուր առմամբ, քանի որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը, վերջինիս կողմից լռություն պահպանելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Այս տեսանկյունից քննարկման է արժանի Ջոն Մայերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, որտեղ Եվրոպական դատարանը անդրադարձել է մեղադրյալի կողմից լռության պահպանման իրավունքին: Նշված գործում Եվրոպական դատարանը սահմանել է, որ «լռության իրավունքը» բացարձակ չէ: Չնայած որ անթույլատրելի է մեղադրանքը կառուցել բացարձակապես կամ հիմնականում մեղադրյալի լռության կամ նրա՝ հարցերին պատասխանելուց հրաժարվելու հանգամանքի վրա, միանգամայն ակնհայտ է, որ նշված առավելությունը չի կարող կանխել այն, որ մեղադրյալի լռության փաստը հաշվի կառնվի այնպիսի իրավիճակներում, որոնք բացատրության կարիք են զգում: Եվրոպական դատարանը գտել է, որ այս գործով օրենքի կիրառումը չի խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Գիմումատուն չի ենթարկվել ուղղակի ճնշման, նրա նկատմամբ տույժ չի կիրառվել, և նրան ազատագրվմամբ չեն սպառնացել: Հետագայում Եվրոպական դատարանը հայտարարեց, որ տրամաբանական եզրակացությունների կիրառումն առողջ բանականության դրսևորում է համարվում այն պայմաններում, երբ դիմումատուն հրաժարվել է իր գործողություններին հիմնավորված բացատրություններ ներկայացնելուց: Դատարանի կողմից «արդարության» սկզբունքի պահպանման բավարար երաշխիքներ են եղել, և ընդ-

հանուր պարտականությունը, որը վերաբերում էր ապացույցներին, ընկած էր մեղադրանքի կողմի վրա, որը պարտավոր էր գործ բացել մինչև դիմումատուի լռությունից հետևություններ անելը:

Վերը նշված բոլոր օրինակները, ինչպես նաև այն դեպքերում, երբ գործում են որոշակի կանխավարկածներ, ըստ մեզ, չեն նշանակում մեղավորության կանխավարկած, այսինքն՝ ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի նշանակում, որ վերջինս համարվում է մեղավոր, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Սկզբնական ապացուցման պարտականությունը միշտ էլ դրվում է քրեական հետապնդման մարմինների վրա: Խնդիրն այն է, որ նշված դեպքերում քրեական հետապնդման մարմինների կողմից հավաքված ապացույցները անուղղակի ապացույցներ են: Մեղադրանքը, ճիշտ է, հիմնված է միայն անուղղակի ապացույցների վրա, սակայն դրանց համակցությունն այնքան ծանրակշիռ է, որ հանգեցնում է մեղադրյալի մեղավորության վերաբերյալ եզրակացության: Այս պարագայում նման ապացույցների հերքման պարտականությունն արդեն մնում է մեղադրյալի վրա¹:

Նախագծում ամրագրված են հերքելի իրավական կանխավարկածներ, ինչը նշանակում է, որ նշված հոդվածում ամրագրված փաստերը համարվում են ապացուցված, քանի դեռ քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում: Եթե վարույթի մասնակիցը վիճարկում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը, ապա կրում է հակառակն ապացուցելու պարտականությունը:

¹ Տե՛ս Բաբաև Բ. Կ. Презумпции в советском праве. Горький, 1974. Пронина М. П. Презумпции в современном российском праве. Монография. Под ред. А.П. Кузнецова. М.: Юрлитинформ. 2011. Каминская В. И. Учение о правовых презумпциях в уголовном процессе. Изд-во АН СССР, М.: 1948. Крымов А. А. Правовые презумпции в уголовном процессе. Автореф. дис. канд. юрид. наук. М.: 1999. Морквин В. А. Правовые презумпции в уголовном судопроизводстве России. Автореф. дис. канд. юрид. наук. Екатеринбург, 2008.

² Տե՛ս Калиновский К. Б. «Право презумпций» - стратегия развития уголовного и уголовно-процессуального права. Стратегии уголовного судопроизводства. Сборник материалов Международной научной конференции к 160-летию со дня рождения профессора И.Я. Фойницкого (11-12 октября 2007 г. Санкт-Петербург). Отв. ред. Н.В. Радугная. М.: РАП, 2008. С. 90-97.

³ Տե՛ս Кузнецова О.А. Презумпции в гражданском праве. СПб., 2004. С. 106.

⁴ Տե՛ս Իրավական կանխավարկածի հատկանիշների մասին, տես Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հեղ. խումբ; Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.- Եր.: Լուսարթ հրատարակչատուն, 2014:

- ⁵ Տե՛ս Авдюков М. Г. Распределение обязанностей по доказыванию в гражданском процессе. Советское государство и право, 1972, N 5. С. 49.
- ⁶ Տե՛ս Ярков В. В. Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права. Дис. ... докт. юрид. Наук. Екатеринбург, 1992. С. 30.
- ⁷ Տե՛ս Калиновский К. Б., Смирнов А. В. Презумпции в уголовном процессе. Российское правосудие. 2008, N 4. С. 68-74.
- ⁸ Տե՛ս Смышляев Л. П. Предмет доказывания и распределение обязанностей по доказыванию в советском гражданском процессе. М.: 1961. С. 23.
- ⁹ Տե՛ս Նախագծով հանրաճանաչ փաստերը դիտվում են որպես իրավական կանխավարկած, թեև հանրաճանաչ փաստերի օգտագործման համար չի պահանջվում հիմք-փաստի առկայություն, ուստի դասական իմաստով, հանրաճանաչ փաստերը չեն համարվում իրավական կանխավարկած:
- ¹⁰ Տե՛ս Юдельсон К. С. Судебные доказательства в гражданском процессе. М.: 1956. С. 76.
- ¹¹ Տե՛ս Сериков Ю. А. Презумпции в гражданском судопроизводстве. Волтерс Клувер, 2008. С. 85.
- ¹² Տե՛ս Шундигов В. Д. Принцип непосредственности при расследовании и рассмотрении уголовного дела. Саратов, 1974. С. 31.
- ¹³ Տե՛ս Левченко О. В. Общеизвестные факты в уголовно-процессуальном доказывании. Правоведение, 1996, N 4. С. 94-99.
- ¹⁴ Տե՛ս Селина Е. В. Доказывание с использованием специальных познаний по уголовным делам. М.: Изд. «Юрлитинформ». 2003, С. 24.
- ¹⁵ Տե՛ս Левченко О. В. Общеизвестные факты как средства уголовно-процессуального доказывания. Государство и право. 2002, N 8. С. 50.
- ¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով:
- ¹⁷ Տե՛ս Владимиров Л. Е. Учение об уголовных доказательствах. Тула, 2000. С. 159.
- ¹⁸ Տե՛ս Вульф В. Я. О бремени доказывания в английском уголовном процессе. Советское государство и право. 1962, N 7. С. 127 – 131.
- ¹⁹ Տե՛ս Януш М. Тенденции в установлении бремени доказывания по делам о правонарушениях против окружающей среды. Юстиция Беларуси, N 3. 2001.
- ²⁰ Տե՛ս Калиновский К. Б., Смирнов А. В. Презумпции в уголовном процессе. Российское правосудие. 2008, N 4. С. 68-74.
- ²¹ Տե՛ս Այս մասին մանրամասն տես Ղամբարյան Ա. Մինչդասական վարույթի բարեփոխումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: (Գլխագործնական ձեռնարկ). Եր.: «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2010:

Արտուր Գամբարյան

Доктор юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Правовые презумпции в уголовном процессе РА

В статье автор представил понятие правовой презумпции и ее значение в сфере доказывания, также комментировались правовые презумпции предусмотренные ст. 106 уголовно-процессуального кодекса РА.

Ключевые слова: презумпция, бремя доказывания общеизвестных фактов вытекающих из обязанностей.

Artur Ghambaryan

Doctor of Law, Associate Professor

SUMMARY

Legal presumptions in the criminal proceedings of RA

The author introduced the concept of a legal presumption and its importance in the field of proof, also were commented the legal presumption specified by Article. 106 Criminal Procedure Code of RA.

Keywords: presumption, the burden of proving facts of common knowledge arising from duties.